

ԱՄՆ ՄԱՍԱՀՈՒՍԵՏՍ ՆԱՀԱՆԳԻ ՇԵՐԻՖԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

18.09.2014 13:53



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ սեպտեմբերի 18-ին, հյուրընկալվել է ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Միդլսեքս շրջանի շերիֆ Փիթր Քութոլջյանը: Պալատի նախագահ Արա Զոհրաբյանի, Պալատի նախագահի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանի և Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի ուղեկցությամբ Փիթրը Քութոլջյանը շրջայց է կատարել Հայաստանի փաստաբանների պալատի շենքով, ծանոթացել պայմաններին:

ԱՄՆ-ից ժամանած հյուրը հանդիպում է ունեցել հայ փաստաբանների հետ, ներկայացրել այն գործառույթները, որոնք իրականացնում է իր աշխատանքի շրջանակներում:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջունել է շերիֆ Քութոլջյանի այցը Հայաստան և Փաստաբանների պալատ:

Փիթրը Քութոլջյանը նույնպես շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և խոսել այն ճանապարհի մասին, որը նրան հասցրել է այդ պաշտոնին: Ըստ Քութոլջյանի նա աշխատել է որպես հանրային պաշտպան, այնուհետև՝ դատախազ: Նա նշել է, որ գնահատում է այն հանգամանքը, որ մարդիկ օգնում են միմյանց: Նրա խոսքով իր աշխատանքում հաճախ է հանդիպում դատապարտյալների հանդեպ բռնության դեպքերի, որոնց կանխման համար ջանք ու եռանդ չի խնայում: Նրա գործառույթների մեջ է մտնում նաև դատապարտյալներին մասնագիտությամբ ապահովելը կամ նրանց համար հարմար աշխատաք գտնելը:


Հանդիպման ընթացքում հայ փաստաբանները Փիթրը Քութոլջյանի հետ քննարկել են մասնագիտական բազմաթիվ հարցեր՝ հիմնականում խոսվել է հայ-ամերիկյան իրավական դաշտի հարաբերությունների մասին:








Առաջարկվող նորություններ




25.10.2013 ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



06.11.2013 ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



07.11.2013 ԱՐԱ ԶՈՂՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱՆ



11.11.2013 ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ
ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```